

Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Ս Ր Ո Վ ՈՒ Շ Ր Ո Վ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ՀԵՆՐԻԿՈՍ ՍԵՆՔԻԵՎԻՉԻ

(Նախըմթ. տես էջ 127)

Ք.

Քանի մ'օր վերջ տեղակային վաշտը գեպ ի Լուպին ճամբայ կ'ելլէր: Տնիկներ գետնն անցնելով՝ յառաջ խաղաղին անապատ գաշտի լայն պողոտայէն՝ որ Չիկրինը Լուպինի կը միացնէր, Ժուքիի, Էօթն-Ուշարակնեքու և Գորոլի մէջէն անցնելով, Նման ճամբայ մը կը միացնէր Չիկրինը Քիւէի: Երբեմն, առ Սոլոնիցայիւ՝ Ժուլքիէքի Ալթամանին միշտ պատերազմէն առաջ, այդ ճամբաներուն և ոչ ստուերը կար: Լուպին երթալու համար՝ պէտք էր կտրել անցնիլ անմշակ դաշտը կամ անապատը: Չիկրին գետով կ'երթըցուէր, ի դարձին Գորոլէն անցնելով: Ընդհանրապէս, Տնիկներէն անպին՝ երկիրն անապատ էր, Վալրենի Դաշտերէն թիչ մ'աւելի բնակութիւն կար, և Զարորոթի ուսգականերու ասպատակութեանց ասպարէզ մ'էր:

Սալայի ստորին եզերքներուն վրայ՝ ուր մարդկային հետքերէ կոյս մնացած՝ ահագին անտառներ կը տարածուէին, ինչպէս նաեւ Ռուզայի, Սլիէրորտայի, Գորոլայի և ուրիշ շատ գետերու և հեղեղատներու ափունքներուն վրայ՝ ընդարձակ ճախճախուտներ կը ձեւանային, տեղաւոր ծածկուած սոճիներով, տեղաւոր իրեն մարդադետին տարածուած: Այս անտառներն ասպատակարարն էին վայրի գազաններու, անոնց մէջ կը գտնուէին վայրի

ցուլեր, թաւամազ արջեր, կինճ, և ասոնց հետ միասին անհամար տեսակ գայլերու, լուսաններու, կուզերու, վայրի ուղտերու և այրերու: Գետերու խորշերու և ողողած տեղերու տակ՝ կուզեր կը բարձրացնէին իւրենց խողովը: Զարորոթիները կը պատմէին թէ այս կուզերու մէջ հարկաւանաներ կը գտնուէին, ձեան պէս սպիտակ: Բարձր և ցամաք դաշտերու մէջ կը թափառէին՝ խուռացնալ բաշերով և հրացայտ աչքերով՝ վայրի ձիերու խումբեր: Գետերը լեցուն էին ձկնեքով և ջրային թռչուններով: Մարդկային նախկին բնակութեան հետքերը պահող երկիր մ'էր՝ որ կը ներհէր: Հոս հոն քաղաքներու՝ աւերակներ կը տեսնուէին, որոնցմէ նշխարուած էին Գորոլ և Լուպին: ամէն կողմ կանանչ անտառներու մէջ կ'երեւային սպիտակ շիրիմներ: Հոս ալ՝ ինչպէս Վալրենի Դաշտերու մէջ՝ գիշերը ուրուականներ և վամպիրներ կը թափառէին: Երբ Զարորոթիները կը պատմէին թէ երբեմն անտառին խորէն անձանոթ գազաններու սոնոցը կը լուրէր, մարդկային և գազանային ձայնի խառնուրդ մը, որոի կամ կուսոյ ահագին աղաղակներ: Լուրին տակէն ընկղմած քաղաքներու զանգակներուն հնչիւնը կու գար: Սխալ բանի անբնական իրերը մ'էր: Հոս ճախճախուտ, հոն անբեր և ցամաք, միշտ վտանգաւոր՝ թաթարաց ասպատակութեանց պատճառաւ: Զարորոթիները միայն կ'երթային հոն ձկնորսութեան կամ կուղբ որսալու համար: Սակայն այսու հանգերձ՝ յամառ բոյսի մը նման, որ միշտ կը բողբոջի՝ որչափ ալ խլուին արմատները, հաստատուն բնակութիւնը կը ջանար հոն հետզհետէ արմատ ձգելու:

Եւ իրացնէ, քաղաքներ և գաղթականութիւններ, գիւղեր և սուներ կը բարձրանային

հոն: Երկիրը կը սկսէր պողաբեր ըլլալ և ազատութիւն շնչել: Երբ այդ երկիրները վիսնիավիցքի իշխաններու ձեռքն ածեցաւ, այն ատեն միայն կեանքը ծաղկեցաւ հոն: Միքայէլ իշխանը՝ մոյսովացի աղջկան մը հետ ամուսնանալով՝ Տնիքերէն անկին հասաւ ասանց իրեն ընտելութիւնը, զազմականներ կանչեց, երկիրը զարդացուց, անապատները բնակիչներով լեցուց, երեսուն տարի տուրքէ ազատ բլաւ, վանքեր շինեց, իշխանաբար տիրեց այն կողմերուն: Մինչեւ անգամ աւագացի հին բնակիչները սիրով հարկատու եղան իշխանին, որուն պաշտպանութիւնը կը վայելէին բնիկէն՝ դաշտականաց, սրբ յաճախ թաթարներէն ալ աւելի վարկենազնեցէին: Սակայն շատ աւելի ծաղկեցաւ երեսուն տարի իշխան Ներսիսի վարչութեան ժամանակ, որուն կայսրածնները՝ սկսեալ Ջիլիքիէն՝ կը տարածուէին մինչեւ Գոնդուպ և Ռոմի: Այսպէս չէր միայն իշխանին հարստութիւնը, ունէր երկիրներ Վլշինիայ, Հաւսանիայ և Քիւլէի նահանգներուն մէջ ալ. ոսկայն բազմաթիւ յաղթականին ամենէն զօրաւոր նեցուկը Տնիքերէն անկին եղող կալուածն էր: Գաշտեցնները հպատակեցան: Անկողի խումբերը զինատրուկան կարգապահութեան տակ մեան: Միշտ բռնութեամբ և յափշտակութեամբ ապրող թափառականներ և աւազակները, հիմայ յառաջապահ գոնդը կը կազմէին, և իշխանին կալուածոց սահմաններուն պահպանութիւն կ'ընէին, շղթայակալ գաղմկաններու նման՝ որոնք ակոսանին կրճաելով կը սպառնան օտարներու:

Վերջապէս ամէն կողմը կ'ետար կեանքը: Ճամբաներ կը բացուէին, թուրքեր կը բարձրադիման, և հոն ուր երբեմն հոյր կը մնչէր եղեգնականներու մէջէն, և գիշերը կ'ոտնային գայլերը և խղզուողներու ուրուականները կը թափառէին, հիմայ անպարտ կը գտնային շաղապները: Տնիքերէն անկին շատ հարիւրէն աւելի երկանաբարքեր ցորեն կ'աւազայն. քառասուն հազարէն աւելի մարդիկ հարկ կը վճարէին իշխանին. մեղուները կը բզկային անապատներու մէջ: Շարունակ երկու ամիսն լրաց կը բարձրանային տուներ, խրճիթներ, գիւղեր: Անպատ պաշտին մէջ

վայրենի հօտերու հետ կ'արածէին ընտանի կենդանիները և ձիերը: Տանիքներու ծովը և եկեղեցիներու սակչած աշտարակները՝ անապատաց և անապատի միակերպութիւնը կը կոտորէին:

Արշակունցի, բոլորովին ապահով, հանապարհ տալ կ'երթար, իբր թէ իրեն սեպհական երկիրներու մէջ ճամբորդէր:

1648 տարուայ առաջին օրերն էին դեռ, ոսկայն դարնանային հով մը կը փչէր: Երկիրը կախուղ և դաշտ էր, արեւը ամառուան պէս կիզէր: Տեղակալին ուղեկիցները զգալի կերպով շտապէր էին. Ջիլիքիէն իրեն միացեր էր վաղահը դեռականութիւն և դր, որուն զուտ էր Ռազման Ռաբաւ, և զոր փոխարէրէն Լուսլին կը զրկէր: Գեռականութեան կ'ընկերակց կառքեր և ծառաներ: Ատոնցմէ զատ՝ տեղակալին կ'ընկերէր Լուսլինու Բոտակիւնպահ հսկայն՝ իրեն ահագին սուրովը և մարդիկներովը:

Գեղեցիկ օդը և վերահաս գարնան ազգեցնութիւնը՝ սրտերնին կը զուարթացնէին. խի ամենէն աւելի զուարթը տեղակալն էր, վրան գի երկար ճամբորդութենէ մը վերջ՝ կը գտնար իշխանին յարկին տակ՝ զոր իրեն սեպհական տունը կը նկատէր. բաց ատոն՝ իրեն յանձնուած հրամանը աղէկ կատարած ըլլալու պիտակցութիւնն ունէր: Բաց ի իշխանին հաճութենէն՝ Լուսլինի մէջ իրեն կը սպառնէին երկու գեղեցիկ սեւ աչքեր. անոր համար Արշակունցի զուարթ ըլլալու կրկին պատճառ ունէր:

Այն աչքերը Անուսիա Պարզուկաղա Գրապիւնիքի էին, շքաղիւ օրիւրը կրկնելու իշխանուհւոյն, զգեական ամենազեղեցիկ աղջիկը. ահաւոր չարածնիկ՝ որ գիտէր շատեալուն խելքը զլիւն առնել, առանց տաքնալու իրեն արծարած բոցէն: Արիւնքաւ իշխանուհին ճշգրտապահանջ և խիտա տիկին մ'էր, սոսկայն երկատարակաց հառաչանաց և սիրամառ նայուածքներու փոխանակութեան արգելք չէր ըլլար: Արշակունցի ալ կը հառաչէր, բայց որովհետեւ բնութեամբ զուարթ էր և միանգամայն պիտուր, չէր նախանձեր երբ Անուսիա՝ իրմէ զատ՝ փայտը վաղահը սպայի մը, թնայնութեամբ սպայի մը, դաւա

կոնի մը, և մինչև անգամ պիտակերեո և գնդակով մը բերանին առատադը վիրաւորուած ըլլալուն պատճառաւ՝ թլուատ հռատարի մը: Գեղեցիկ օրիորդին պատճառաւ անգամ մը մենամարտեր էր դասկոնին հետ. սակայն երբ կը ստիպուէր երկայն տօնն մնալ Լուսլին, սպասելով ընդդէմ թաթմարաց արշաւանաց, ձանձրոյթ կը գգար ի ներկայութեան իսկ օրիորդին:

Բայց այս անգամ՝ սովորականէն աւելի զուարթ կը գտնար խրիմէն, երգելով և ձին խաղցնելով առաջ կ'երթար: Լոնկինոս հրակայն՝ լիվոնիացի մեծղի ձիւ մը վրայ նստած, և ինչպէս միշտ՝ լուրջ և մտածկոտ, անոր քովէն կ'երթար: Դեռ սպանութեան կառքերը շատ ետեւ մնացեր էին:

— Պեռսպոնը կոծողի մը պէս կը քննայ, — ըսաւ Մըքհուլցըին: Հիանալի բաներ պատմեց Վալաւհիւյ վրայօք. հարուստ երկիր, սքանչելի օդ, ոսկի, զինի, չոր պտուղներ, կինդանիններ, ամենայն բարիք Աստուծոյ: Կարծեմ մեր իշխանը՝ որ մօր կողմանէ մոլտաւ է, փոխարքային դահուն իրաւունք մ'ուշի, որուն սչ ոք կարող է հակառակել: Բաց աստի, Վալաւհիւան նոր չէ մեր կարծի գիտորներուն համար: Հոն յաղթեցին թրքաց, թաթմարներուն, Վալաւհներուն, Դրանսիւլիանիացոց: . . .

— Թաւաւորթ և վատ մարդիկ ամէնքն ալ, — խորհրդածեց Լոնկինոս: — Ձախլոպա միշտ կ'ըսէր ինծի. և աղօթքի գրքերուն մէջ ալ ատոր ապացոյցը կայ:

— Զեմ հասկընար:

— Հիմալ կը ցուցնեմ. ես իմ աղօթադիրքս հրիք չեմ հեռացներ քովէս:

Աս ըսելով, թամբին մախպէն հանեց մազադաթեայ կազմով գրքոյի մը, յարգանք համբուրեց զայն, և քսնի մը թերթ զարմնելով, բռաւ:

— Կարդա՛:

Մըքհուլցըի սկսաւ.

« Դուն մեր ապաստանն ես, ո՞վ Մայր Աստուծոյ . . . »: Ինչ վերաբերութիւն ունի ասիկա Վալաւհներուն հետ . . . աս սաղմոս մըն է:

— Կարդա՛ շարունակութիւնը:

« Ընդունէ՛ մեր խնդիրքները, ո՞վ Պաշտպան, ազատէ՛ զմեզ ի վշտաց . . . »:

— Շարունակէ՛, շարունակէ՛:

« Որպէս զի արժանի ըլլանք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շնորհաց, Ամէն »:

— Ապրի՛ս. հիմայ հարցմունք մը կու գայ:

Սըքհուլցըի կարդաց.

— « Հարցունք. ինչո՞ւ համար վալաւհ ձիւսը զօրքը թեթեւազէն կ'ըսուի »:

« Պատասխան. վասն զի թեթեւ և պարաստ է փախչելու »:

— Է՛հ, Բնչ կ'ըսես. ճշմարիտ է: Գեղեցիկ գիրք մը, հաւատա՛. աղօթքներուն քով զինուորական ամէն տեսակ ծանօթութիւններ կը գտնաս. կրնաս ստիլի ո՞ր ազգի աւելի զօրուոր է, ո՞րը նուազ . . . : Իսկ Վալաւհները վատ և մատնիչ են միանգամայն:

— Շատ իրաւ է, բայց Մըքհուլցըի. փանաքի զինուորներ են: Սակայն մեր իշխանը վալաւհ բռնած լաւ գունդ մ'ունի, որուն տեղակալն Պիքովէզն է . . . նման մեր թաթմար և զազախ դուռներուն, որոնք այդ անուրը կը կրեն՝ վասն զի թաթմարաց և Ղազախներու նման զինուած են . . . և բուն Վալաւհ կարծեմ հաղիւ հարիւր հատ կը հաշուին:

— Խնդրեմ ըսէ՛, տեղակալ, իշխանը գէնքի տակ շատ մարդ ունի՛:

— Ութ հազար կարծեմ պիտի ըլլան, յառաջապահ Ղազախներէն զուրս: Բայց Սասիլիքովքի կ'ըսէր թէ նոր զինուորագրութիւն մը սկսեր է:

— Պատեհազմի յոյս կ'այ:

— Կ'ըսուի թէ մեծ պատերազմ մը պիտի ըլլայ թրքաց գէմ, և թէ՛ թաղաւորն ինքնին բանակին զուխը պիտի անցնի: Կ'ըսուի դարձեալ թէ թաթմարաց նուէրներն առ այժմ պիտի չդրիւնին և թէ թաթմարները վախերնէն չեն շարժուի: Այս բաննս վրայ կը խօսուէր խրիմի մէջ ալ՝ ուր մեծ պատուով ընդունուեցայ. վասն զի կը Պօսուի՛ թէ երբ թաղաւորը շարժիլ սկսի, Երեմիա իշխանը պիտի արշաւէ խրիմ վրայ և բնաջինջ պիտի ընէ թաթմարները: Այս ստորդ է՝ որ այս պիտի գործ մը իրմէ գատ ուրիշի մը չեն յանձներ:

Լոնկինոս աչքերն և ձեռքերն երկինք բարձրացուց:

— Տօբ մեզի, ո՛վ Տէր, սրբազան պատերազմ մը՝ ի մեծագոյն փառս քրիստոնէսութեան և մեր ազգին, իսկ խնձի մեղաւորին շնորհէ ուխտս կատարելու առիթով. կամ յաղթմել և կամ մեռնիլ:

— Ո՛րտա մ'ըրբն ես:

— Այո՛: Սակայն անկեղծօրէն սիրտս քեզի պիտի բանամ, և պիտի ըսեմ թէ ինչ բան զիս բանադատեց այս ուխտս ընելու: Գիտե՞ս որ իմ Գլխահատ զինանշանո՞ւ ընդունե՞ր եմ՝ ես նախնիքներս մէկէն, որ Կրիստոսի պատերազմի մէջ կը տեսնէ կրօնաւորի կնոսքով երեք ասպետներ, և երեքին զլուխն ալ միանգամայն կը կտրէ: Ժամանակին տարեգրութիւնք մեծ գովառանք բա՛լ կը յիշեն այս քաջօճիկներս:

— Կը տեսնուի թէ քու ձեռքիդ պէս ծանր ձեռք մ'անի եղբ:

— Այն ատեն թագաւորը շորհէր է իրեն արծաթեայ յատակի վրայ՝ այծի երեք զլուխներ զինանշանը, ի յիշատակ այն ասպետներուն՝ որոնց վահաններուն վրայ այդ զլուխները կային: Զինանշանը և այս սուրը՝ նախաձայտ ժառանգութիւն ձեցի իրեն սերրն զոք, պարագ զնեղով անտից վրայ՝ պահել ընտանեաց և սուրին պատուը:

— Նշանաւոր ազգատեճմի մը սերունդ բլլա՞յ ոչ ոք կրնայ ուրանալ:

Լոնկինոս խոր հասաչանք մ'արձերկեց, և շարունակեց.

— Ընտանեաց վերջինն բլլալով՝ սխտս բրբր եմ Տիրամօր, ամուրի ապրիլ և չամուսնանալ՝ մինչեւ որ նախահօգու պէն՝ մէկ հարուածով երեք զլուխ չկտրեմ այս սուրով...: Եւ զպէն կը տեսնես, ո՞վ օգորմածոց Աստուած, զորն կը տեսնես որ աւելն բան ըրի՛ խոստումս պահելու համար. Ժուժկալ եղայ միշտ, սիրտս զուպեցի, պատերազմի մէջ՝ նայ, սակայն, աւաղ, բազդ չունեցայ...

— Երեք զլուխները զեռ չե՞ս կտրած, — հարցաւ ծիծաղելով անդակալը:

— Ո՛չ, գոբխաաբար չյաջողեցայ: Երկու՞ այծ, բայց երեք՝ երրեք: Սրախ ցար

Աստուած՝ միայն կարող է տեսնել և Ռժով եմ, հարուստ ալ եմ. բայց երխտաարդութիւնս կ'անցնի: Քիչ ատենէն քառասունը հինգ տարեկան կ'ըլլամ...: Սիրար՝ աչք կը պահանջէ, և քնտանիքը կը մարի, և ոչինչ, ոչինչ. երեք զլուխները չեն հանդիպիր: Ահա թէ ինչպիսի՞նք Գլխահատ եմ ես, նախատինք ազգաց, ինչպէս կ'ըսէ Զաւկոստա...: Սակայն համբերութեամբ կը տանիմ ամէն բանի:

Եւ հոկայն այնպիսի արտք կերպով մը հասաչեց, որ ձին անգամ՝ թերեւս առ արջ՝ ցուայի իրկինը մ'արձակեց:

— Մ'էկ բան միայն քեզի պիտի ըսեմ, — պատասխանեց Սքեզուցքի, — որ եթէ իշխան Երեմիայի ծառայութեան մէջ չգտնես բախտ, ուրիշ տեղ երբեք պիտի չգտնես:

Թիւրքու բարախման՝ շատաչին ձայն մը խօսակցութիւնն ընդմիջեց. թուռններ էին՝ որոնք չէին պաղթած՝ ձեռք մկզմ բլլալուն պատճառաւ: Լոնկինոս և տեղակալը երբ կը մօտանային Գաղամիթի՝ իրենց գլխուն վրայէն անցաւ կոտակներու երամ մը, այնչափ ցած՝ որ կարելի էր գաւազանով մը որսալ զանոնք: Ռժով ճիշտ արձերկելով կը թռչէին, և փոխանակ եղգպնուսի վրայ իջնելու, յանկարծ զէպ ի վեր ստաննեցան:

— Կարծես թէ կը փախչին. զերեք հալածող մը պէտք է որ բլլայ, — ըսաւ Սքեզուցքի:

— Տես, տես, — պոռաց ընկերը, սպիտակ թռչուն մը ցուցնելով, որ նեախ պէս օդը պտտեղով՝ շեշտակի երամին վրայ կը սլանար:

— Բաղէ մ'է՛: Դիտալոր քանի մը հասունի. թառ թէ մէկը թողուցր է:

Այդ միջոցին Ռոզման Ռբաւ կը մօտենար՝ սեւ ձիւս մը վրայ հնծած, ետեւէն կու գային իրեն մարդիկներէն քանի մը հոգի:

— Սքանչելի՛ է, տեղակալ, ըսաւ:

— Բազէն քնկղ է, ախար զեսպան:

— Խոս է. հիանալի թռչուն մը, ինչպէս կը տեսնես:

Երեքն ալ աչքերնին օդային տեսարանին յառած՝ առաջ գնացին. իրենց ետեւէն կու գային, գլխունց ձեռքերնին՝ բազէկիրթ-

հերք: Ռազէն՝ կոռւնկները պէտք է վեր բարձրանալու ստիպելէն վերջ, կայսակի արազութեամբ անոնցմէ աւելի վեր բարձրացաւ, և թեւատարած անշարժ կեցաւ փետրաբարձ երամին վրայ: Կռուներնիրը քովէ քով ամփափուեցան, ոտք ճիշեր արձրկեցին, վիզերնին երկնցուցին, կառուցին նիզակի պէս վեր բարձրացուցին և յարձակման կը սպասէին: Բազէն շրջաններ կ'ընէր, կ'իջնէր, նորէն վեր կը բարձրանար. կարծես կը վախէր թափով յարձրկելու այն սպառնալից հարկու որածայր նիզակներու վրայ: Արեւուն ճառագայթներէն շուտաւորած՝ ուղիտակ փետուրներն արծաթի նման կը փայլէին: Սակայն յանկարծ փոխանակ յարձրկելու աւարին վրայ, պէտք առաջ ուղղեց թոխը և շուտով անհրեւելիացաւ:

Նախ Սրբգրացի մարտկեց ձին՝ անոր ետեւէն հասնելու համար: Դեսպանը, բազէ կրթներն և Լոսկինոս իրեն հետեւեցան:

Առաջին պարձաւածքին՝ տեղակայր յանկարծ կեցոց ձին. նոր տեսարան մը բացուեց էր գիմացը: Իստեւը Զարնախոտած կառք մը ճամբուն մէջանգր խոյեր էր: Կառապանը չկար, անշուշտ՝ օգնութիւն գտնելու գնացեր էր: Կործանած կառքին քով երկու կանայք կիցեր էին. մին՝ խիստ և այրաւան պէմքով, հագուած էր աղուեան մարմէ մուշակի մը և նոյն մարմէն գլխարկ մը պոչուր. միւսը՝ աշնուական և կանոնաւոր զէմքով մանկամարդ մը: Վերջնայոս ուսերուն վրայ հանդարտ կերպով թափեր էր փախըտական բազէն, և կառուցով իրեն կառքին խառնափնթոր փետուրները կը մարբէր:

Սրբգրացիի այնպիսի թափով քաշիւր էր սանձը՝ որ ձիուն ոմբակները հողին մէջ մխուեց էին: Ի նշան յարգանաց՝ ձեռքը գլխարկին տարաւ. ոսկայն կը ստատամէր, արկները պէտք էր բարեկէ՛ն ի՞նչ բազէն խոյերը: Չինքը վրդավոյր աւելի թզնաքսի մարմէ գլխարկի մը ասկէն իրեն նայող երկու վտախուն աչքերն էին, աչքեր՝ սրունց նմանը երբեք չէր ածած և սրունց համեմատութեամբ Անուսիայի աչքերը արեւու գիմաց ճրագի մը նման էին:

Բազէն այն աստն միայն կրցան բռնել՝ երբ բազկանը գլխանոցը անոր վրայ ձգել յաշողեցաւ:

— Տեսա՞ր, — բոտ հառակաւոր կինը, — սի՛ որ ուլ ըլլա՞ք, գոթախոտութեան մը հանդիպած երկու կանանց՝ սրունք ընելէքնին չին դիտեր, մի՛ զշանաք ձեռ օգնութիւնը: Մի՛ր տունէն երեք միսն միայն հեռու ենք. բայց որովհետեւ կառքին լիսեօր կորեցաւ, բռնադատեալ ենք զիշերը բացօթեայ անցրնել: Կառապանը զրկեցի փոխապաւելեան ուրիշ միջոց մը գտնելու, սակայն մինչեւ որ գտնայ՝ մալթը պիտի կոխէ, և մեր կացութիւնն ահաւոր պիտի ըլլայ:

Պատառ տրկինն այնչափ շատ և այնպիսի անախտօք ձայնով կը խօսէր՝ որ Սրբգրացիի գարմացաւ, սակայն և այնպէս քաղցրութեամբ որ պատառխանեց.

— Ապահով եղէ՞ք, զձեզ անօդական չենք թողուր: Լուպլին կ'երթանք. Երեմիա իշխանին ծառայութեան մէջն ենք... Կարծեմ նոյն ճամբան է մերն ալ. ոսկայն եթէ որիշ ալ ըլլար մեր ճամբան՝ յօժարութեամբ կը փոխկնէր զայն, եթէ մեր ուղեկցութիւնը ձեզի ունհանայ չէ: Կառք չունինք, վստն զի ձիաւոր ենք. անշուշտ պետական պիտի տնենայ կառք մը, և չեմ տարակուսիր որ յօժարութեամբ տակ: Դեսպանը սամյորէ զլիարկը հանեց, և անմիջապէս բազկանի մը հրամայեց երթալ և ետեւ մնացած կառքը բերել:

Տեղակալը չէր յազնեար մանկամարդը պիտէն, իսկ սա չհանդուրժելով անոր բռնաւտ նայութեանը, վար առաւ դեղանի աչքերը:

— Մ'եզի բրած օգնութեան համար՝ Անուտաւ զձեզ վարձար, — պատառխանեց պատառ տրկինը: — Եւ որովհետեւ ասկէ մինչեւ Լուպլին դեռ բաւական ճամբայ կայ, կը յաւամք լնէ մեր հիւրատրութիւնը պիտի չուզէք մերժել... Ես Գաւրգէի իշխանին աչքին եմ, իսկ այս օրիսրը՝ էրկանս մեծ եղբոր աղջիկն է, և իբրեւ սրբ՝ մեր խնամաց յանձնուած: Զաւակներս տունն են հիմայ... Զերբասիւն կու գամ, ուր առ ամենատարբ

• • • • •

Մայրն Աստուծոյ ուխտի գնացեր էր : Կր
զառնայինք. այս գործարտութիւնն հոնդկոյե-
ցաւ մեզի, և առանց ձեր վեհաձան օգնու-
թեան՝ չեմ գիտեր ինչ պիտի ընէինք :

Իշխանուհին զեռ շատ պիտի խօսէր եթէ
բարեբախտաբար չերեւնային հեռուն Սքշե-
զաւցքի զինուարներն և կոտորէ :

— Դուն վատիլ Գաւրջիլի իշխանին աշ-
րին ես, — հարցուց տեղակալը :

— Ո՛հ, — պատասխանեց իշխանուհին՝
գրեթէ վիրաւորուած, — Կոտորակին պարին
եմ. Հեղինէն՝ վատիլի ազնիւն է :

— Լուսլինի մէջ վատիլ իշխանին վրայօք
շատ բան լսեր եմ : Փաջ գինուսր էր և Մի-
քայլ իշխանին վտառաւորան արծառացած :

— Լուսլին երբեք չեմ գնացեր, — պա-
տասխանեց զոռզովեանմբ իշխանուհին, — և
անոր քաջութիւններէն տեղեկութիւն չունիմ :
Անոր ամենուն ծանօթ վերջին զործերուն
վրայօք ալ հարկ չէ խօսիլ :

Այս խօսքերս լսելով՝ մանկամարդ Հե-
ղինէ գլուխը խնամահեցուց :

— Այդպէս մի խօսիր, իշխանուհի, —
պատասխանեց տաքութեամբ տեղակալը : —
Վատիլ իշխանը՝ պատմառասնական սխալի
մը զսէ, կեանքը և պատիւը կորսնցնելու
պատասխարեցուցաւ, անոր համար փախրս
տեանը ինքզինքը ազատել ոտայտեցուցաւ :
Ստակայն վերջը անմեղութիւնը ճանչցուեցաւ,
և ինքը վերստին ստացաւ իր պատուաւսր
անունը, և որչափ խիստ և անպիտի եղաւ ա-
նիրաւութիւնը՝ այնչափ բարձրացաւ անոր
փառքը :

Իշխանուհին նայեցաւ տեղակալին երեսը.
զայլուած արտութիւնը զէմքին վրայ կերեւ-
նար : Ստակայն Աքշուրցքի՝ թէպէտ երկուս-
ոսրով՝ այնպիսի անպետական կերպ մ'ունէր,
որ իշխանուհին չհամարձակեցաւ վրձել ա-
նոր հետ : Գարձաւ զէպի օրիւրպի ու խիստ
կերպով հրամայեց.

— Մեր բեռներն այս պարաններուն կառ-
քին մէջ գետեղելու ուշ գիր :

— Կը ներմա, օրիորդ իշխանուհի, որ
օգնեմ քեզի, — բուռ տեղակալը :

Միտին զէպ ի կողքը գնացին, և կառ-
քին զրան երկու կողմը կեցան : Ազնիւն

գեղեցիկ աչքերն արեւոս պայծառ ճառագայթ-
ներու նման՝ բարձրացան զէպ ի երկաւսարդ
սպային երեսը :

— Ինչպէս շնորհակալ ըլլամ քեզի, —
բուռ ձայնով մի՛ որ երաժշտութեան մը
պէս հոտաւ տեղակալին ականջին, — Ինչ-
պէս շնորհակալ ըլլամ՝ որ հօրս պատիւը
պաշտպանեցիք՝ նայն իոյ իրեն մերձասր
ազգականաց անիրաւութեան զէմ :

— Ներք, իշխանուհի, — պատասխա-
նեց տեղակալը, — քու այդ երաժշտական
թիտնդ համար ինքզինքս կրակ ալ նետելու
պատրաստ եմ. սակայն շնորհակալութեան
արժանի մեծ ծառայութիւն մը չըրի :

— Դուն կը մերժես երաժշտական
զգացմանքներս, սակայն ես խեղճ որբուհիս՝
արիւշ կերպով չեմ կարող յայտնել զայն :

— Ոչ թէ կը մերժեմ զայն, — պատաս-
խանեց խնայալատ տեղակալը, — սակայն
կը ջանամ արժանի ըլլալ անոր՝ անձնանէր
հաւատարմութեամբ, և կը խնդրեմ քեզմէ
որ ընդունին իմ ծառայութիւններս :

Երկնեայ ազնիւր՝ վրդոված. ապա զոյ-
նր նետեց, և ձեռքերով երեսը ծածկելով,
տխուր ձայնով ըսաւ.

— Այդ ծառայութիւնը քու թշուառու-
թեանդ պատճառ պիտի ըլլայ :

— Թող ըլլայ, եթէ Աստուծոյ կամքն
այն է. ոսկայն ես ծնրադիր կը խնդրեմ
քեզմէ ոչ չնորհք :

— Կարելի բան չէ՝ որ առաջին տեսնե-
լույ զիս, այլչափ մեծ փափաք ունենաւ
հաճոյական բան մ'ընելու ինձի :

— Այո, հազիւ թէ տեսայ քեզի՝ մոռցայ
ինքզինքս, և հիմայ կը տեսնեմ որ ինչպե՛ս
աղաւ զինուար մ'էի՝ շղթաներու տակ ինկայ :
Կը տեսնուի թէ այս է եղիք Աստուծոյ կամքը :

Այս յափշտակութեան վայրկեանը խան-
գարեց իշխանուհոյն խոսքու ձայնը, որ Հե-
ղինէն կը կանչէր : Կուրք պատրաստ էր,
կարասիք գետեղուած : Ռազման Ռարոս՝ բն-
տիւր ասպետ, իրեն կողքը շնորհեր էր տի-
կիններուն : Տեղակալը հեծաւ ձին, և ուղեկը
միտայն սկսան երթալ :

Մութը կը կոխէր : Գակամիքի ջուրերը

արեւմտեան ճառագայթներէն կտրմի զոյն մը կ'առնուին: Երկնից կաղաղախն վրայ կը սահէին թեթեւ ու ծիրանեղան ամպլիկներ եւ կամայց կամայց գէպ ի հօրեզան կ'իջնէին, կարծես երկայն ճամբորդութենէ մը յոգնած: Սքընզուցքի ձիով՝ երկաթասարդ իշխանահօտն քովէն կ'երթար, բայց լուռ: Սէրը՝ զօրաւոր գինիի մը պէս, կը դնոյցնէր դինքը: Արագ արագ առաջ կ'երթային, ձիերու խրթինջը միայն երբեմն կը վրդովէր անդորրութիւնը: Քիչ մը վերջ՝ վերջապահ խումբը վաշտհը երգ մը սկսաւ, սակայն խախտուեցաւ Լոնկինոսի քնային ձայնէն, որ ի գոյնսու կուսին սաղմոս մը կ'երգէր: Ստաւերները երթալով կը խոտանային, երկնից կամարին վրայ վառեցան առաջին ստուգներ եւ խոնաւ զաշտերէն մշուշ մը սկսաւ քարծրանալ:

Վերջապէս անտառի մը մէջ մտան, ուր զեռ հազիւ հարիւր քայլ տոկէ Լին, ձիերու սաքերու պրնդին մը լսեցին եւ հինգ ձիաւորներ դիմացին ելան: Երկասարդ իշխաններն էին, որոնք կառապանէն լռելով զիպտածը, իրենց մայրը զիմաւորելու կու գային, բերելով միտսին քառաձի կառք մը:

— Դանք էք, աղաք, — պոստը պոստաւ իշխանէին:

— Մ'ենք ենք, մայրիկ, — մոտենալով պատասխանեցին ձիաւորները:

— Ծնորհիւ այս պարոններուն, ձեր օգնութեան այլ եւս պէտք չունիմ: Իմ զաւակներս են. Սիմէսն, Գէորդ, Աստղատ, Նիկոլա ... Իսկ հինգերորդն ո՞վ է ... Ահ, գոն ես, Պոկուն:

Օրիորդ իշխանուհին յանկարծ կառքին խորն ամփոփուեցաւ:

— Այո՛, Պոկուն, — շարունակեց պառուար, — վերջապէս կը տեսնեմ զքեզ սիրելիս: Բարբ՝ եկար, բարբ՝ եկար: Ուրեմն, աղաք, ես արդէն ինչորեք եմ որ պարտններն հաճին Ռազլիկ մեզի հիւր ըլլալու: Ըրէք իրենց ձեր յարգանքները: Հիւր մը տանը մէջ, Աստուած տանը մէջ: Բարբ՝ եկաք, տեսաք:

Երկասարդները գլխարկին վար առին:

— Հաճեցէք, — լսին ամէնքը մէկտեղ, — պատուել մեր յարկը:

— Այդէն խոստացեր են: Ազնուական տոպետներ են որ այսօր պիտի ընդունիք, միայն վախեմ որ վարժած ճոխ բնագոյններով ձերներու, մեր սեղանը շատ համեստ պիտի դառնին:

— Մ'ենք գալիս կենաց վարժած ենք եւ ոչ արքունեաց, — ըսաւ Սքընզուցքի:

— Իսկ ես, — յաւել զեռպանը, — լուր պիտեմ որ ձեր իշխանական տուններու հիւրասիրութիւնը ամենէն աւելի շքեղ արքունիքէն վար չի մնար:

— Ա՜հ, — հառաչեց իշխանուհին, — անցան այն ժամանակները: Դեռ կան վաղի նկոյ եւ Լիմուանիոյ մէջ Գուրգէվիշներ՝ որոնք բանտերէն կը պահէին եւ իշխանի պէս կ'ապրին, սակայն իրենց աղքատ աղջականները չեն ճանչնար: Աստուած թող ներէ իրենց: Մ'ենք զազախի պէս միւրի ենք, բայց զուք, տեսաք, պիտի ներէք մեզի եւ պիտի ընդունիք մեր հիւրընկալութիւնը այնպէս որտալի՝ ինչպէս մենք կը նստիւնք: Խեղճ կալուածք մը եւ քանի մը զեղեր ունիմ միայն, այսու հանդերձ այս օրիորդը խնամելն ալ յանձն առեր եմ:

Պատախն այս խօսքերը լսելով՝ տեղուկալը զարմացաւ, վասն զի լսեք էր որ Ռազլիկ սքանչելի կալուածք մ'է, եւ կը պատկանի վասիլ իշխանին, Հեղինէի հօր: Սակայն պատշաճ չգտանց հարցնել թէ ինչպէս անցեր է Կոստանդինի եւ իրեն սրբոց:

— Ուրեմն, իշխանուհի, հինգ որդի ունիս, — հարցուց Ռոզվան Ռերտու:

— Հինգ էին, — պատասխանեց իշխանուհին, — սակայն՝ Պիէլիւրոսի մէջ անհաւատներն անդրանկիս աչքերը կուրցուցին խորելով, եւ հիմա խեղճը առաջուան պէն չէ: Եւր երկասարդ աղաքս պատերազմի կ'երթան, ես տունը մինակ կը մնամ՝ անոր եւ այս՝ օրիորդին հետ, որ որանեղութիւն կը պատճառէ ինծի՝ քան թէ զուարճութիւն:

Իշխանուհւոյն՝ թուան վրայ խօսելու ժամանակ՝ արհամարհոտ շեշտը հասկըցաւ տեղակալը: Քիչ մնաց որ նախառանց տարափ մը թափէր անոր գլխուն: Նախիցաւ օրիորդին, եւ լուսնի լուսով՝ անոր աչքերը արտաուօք լի տեսաւ:

— Ի՞նչ ունիս, ինչո՞ւ կու լաս, հարցուց ցած ձայնով։

Աղջիկը պատասխան չառաւ։

— Ես զքեզ լալով չեմ կրնար տեսնել, — բոսա Սընչուցքի՝ ձիուն մկէն պէտ ի վար ծոնելով, երբ պատուր Ռոզվան Ռբուռի հետ կը խօսէր։ — Աստուծոյ սիրոյն համար, խօսք մը լուէ, և ես պատրաստ եմ զքեզ մխթաբար համար արիւնս թափելու։

Յանկարծ Սընչուցքի զգաց որ ձիաւորս ներէն մէկը իրեն շատ կը մօտենար, այնպէս որ երկու ձիերուն կողերը մէկմէկու կը զարնուէին։ Ապշած և լարկացած՝ դարձաւ զէպի այն յանդուգնը։ Երկու աչքեր ժպիւրհ յանդուգնութեամբ անթաթթ իրեն կը նայէին, գիշերուան մթութեան մէջ՝ զայլի աչքերու պէս կը փայլէին։

— Ի՞նչ կ'ուզես, ինչո՞ւ ուղկես կը դիտես դիտ, — հարցուց Սընչուցքի։

Ձիաւորն առանց պատասխանելու՝ շարունակեց նայել անոր խրոխտանօք։

— Եթէ չես տեսներ, ես լայն կ'ընեմ քեղի, և եթէ նեղ կը դառնա տեղը՝ դարձիւր դաշար, — բոսա բարկութեամբ տեղափախու։

— Եթէ գաշախն ուր ըլլալը չես տեսներ, հետաքիր կառքէն, — պատասխանեց ձիաւորը։ Սընչուցքի՝ փոխադան պատասխանելու՝ միւս ձիուն փորին այնպիսի արացի մը զարկաւ՝ որ զէպի ետեւ ցատքեց։

Ձիաւորը սանձեց ձին, և ուզեց յարձրկիլ տեղակալին վրայ։ Սակայն նոյն վայրկենին պտտաւ իշխանուհւոյն հրամայական ձայնը լսուեցաւ։

— Պոկուն, ի՞նչ հանդիպեցաւ։

Ձայնը իրեն արդիւնքն ունեցաւ։ Պոկուն ձին դարձուց և իշխանուհւոյն մօտեցաւ։

— Ի՞նչ հանդիպեցաւ, կրկնեց պատուար։ Դիտեց որ հոս Ռոզվանի մէջ ես, և ոչ Ռէրէզլուս կամ Խրիմ։ Ուսով գնա և ճամբան ցրցուր, անդունդին մօտ ենք, և բան չի տեսնուիր։

Սընչուցքի զարմացած և զայրացած էր։ Յայտնի էր թէ Պոկուն կ'ուրիւ կ'ուզէր իրեն հետ, սակայն ինչո՞ւ։ Անակնկալ յարձակման ի՞նչ մեկնութիւն տալու էր։ Յանկարծ միտքը

ինկաւ թէ կարելի է օրիորդին պատճառաւ, և այս ստոյգ երեւցաւ իրեն՝ երբ տեսաւ օրիորդին երեսը գիտակի մը պէս պակահար։ Իսկ Պոկուն իշխանուհւոյն հնազանդելով՝ արդէն քառասորակ կ'երթար առջեւէն։ Իշխանուհւին անոր ետեւէն նայելով և բիշ մ'ալ տեղակալին դարձած՝ կը մրմնար ինքրին։

— Տաք-պլուս, իրաւոյնէ դիտաւոր մը։

— Խնդիւր ըտէ, — պատասխանեց Սընչուցքի՝ արհամարհական շեշտով մը։ — Որպէսզէն ծոռայութեան մէջն է այդ Ղազարը։

— Ի՞նչ կ'ըսես ծոռայ։ Դիւր-գնապակա Պոկունն է, իմ սրբոցս բարեկամը։ Իսկ ես զինքն իրբեւ իմ զաւակս կը նկատեմ։ Կառելի՛ բան է որ իրեն անունը բոսա չըլլաս։ Աճեցր կը ճանչանա զինքը։

Սընչուցքի ծանօթ մը անունը, Տնիւրբերի երկու եղբայրներուն վրայ ալ կը խօսուէր անոր սրայ։ Կոյրերը և կաղերը անոր բաշտիւնները կ'երգէին հանդէսներու և հրապարակներու մէջ, սակայն անոր ստուգիւմը ըլլալը և ուսկից զալը՝ ոչ ոք կրնար ըսել։ Միայն կը դիտուէր որ անձակ գաշախ ծնունդ է, Տնիւրբեր, Յրիժները և Ձիւրգամելիք իրեն լարելիւթոսներով, Ժայռերով, անդունդներով, և եղիպուտք ու կրգղեակներն անոր խանձարուրք էին։

Խաղաղութեան ժամանակ՝ Պոկուն որսորդութեան և ձկնորսութեան կ'ելլէր, կրտսերի ընկերներու խումբի մը հետ՝ կը թափառէր Տնիւրբերի վրայ, ճախճախուտներու, եղիպուտքներու մէջ։ Երբեմն ամիսներով անտառին մէջ կը մնար։ Դպրոց էին իրեն համար վայրկեկ Դաշուոց պատերազմները, թաթար խումբերու վրայ յարձակումները, զարոնները, կռիւները, գետափի գեղերու մէջ ասպատակութիւնները։ Յիշելի ձիւն վրայ կ'անցնէր, գիշերը անձակ գաշախին մէջ՝ կրակին քով։

Շուտով սիրելի եղաւ գաշախեաց, զամէնքը գերագանցեց յանդունդութեամբ, անոնց զլիաւոր և առաջնորդ եղաւ։ Կարող էր միայն հարիւր ձիաւորներով զահալթաբար յարձրկիլ Պապխուրայի վրայ և խանին աչքին դիմաց կրակ տալ անոր։ Կարելի էր թա-

թար քաղաքներ և գեղեր, և Զնչէր բնա-
կիշները, իշխաններ և գերիներ ձերբաւ պոչին
կը կապէր. մըրրիի նման կը հասնէր, մա-
հուան նման կ'անցնէր: Քանի մը արշաւանը-
ները ստուգիւ խնդովթիւններ էին: Նոռազ
յանդուգն, շրջաչայեաց և վտանգէ զգուշա-
ցող մարդիկ՝ Սաամուղլի մէջ ցցահար կը մեռ-
նէին, կամ տաճիկ ցոխանուներու մէջ թիա-
վարութեան կը պատապարտուէին. ինքը միշտ
անփնաս և կողոպտաներով բեռնաւորուած կը
փախչէր: Կը պատմուէր թէ ճոխ զանձնը
պահած է Տնիքերի եղեգնուաներուն մէջ.
տեսնուած էր շատ անգամ որ ցիխոտ կօ-
շիկներով կը կոխուէր ասուիներ և կերպաս-
ներ, և ձիուն ոսքերուն ասի թանկագին
գորգեր կը փռէր: Տեսած էին որ դամասկեայ
կերպասէ զգեստներու վրայ կուպը կը քսէր,
Ղաղախներու ցուցնելու համար թէ կ'արհա-
մարհէ ճոխութիւն և զարպարանք: Ոչ մէկ
տեղ երկայն չէր կենար: Քամահանդըն էր
իրեն գործոց վարչը: Մերթ ընդ մերթ կ'ե-
րեւնար Ձիկրին, Ձիրգաստի, Բէրէլլաւ, ուր
Ջարբութիւններու հետ կերտխումի կու տար
ինքզինքը. յետոյ յանկարծ անմշակ դաշար
կը քաշուէր՝ ճգնաւորի կիսնք անցնելու: Յա-
ճախ չորս կողմը կը ժողովէր կայրերը, անոնց
երգին մտիկ կ'ընէր և ոսկիով կը վարձատրէր
զիրենք: Իշխանի հետ իշխան էր, Ղաղախ-
ներու հետ՝ զաղախ, ասպետ՝ ասպետներու
հետ, թափառական՝ թափառականներու հետ:
Ոմանք զինքը խենթի տեղ դրած էին: Ինքն
իսկ չէր գիտեր թէ ինչ կ'ուզէ, որո՞ւ կը
ծառայէ: Ծառայ էր դաշախն, մըրրիին, պա-
տերազմի, սիրոյ, իրեն հանճարին: Միւս
Ամամաններէն և բոլոր աւազակապաններէն
աւելի յաղաղակ էր. նպատակն էր յափշտա-
կել, թէ՛ իրեններէն, թէ՛ թաթարներէն: Պո-
կուն կը կողոպտէր, բայց պատերազմը կը
նախադասէր. կը սիրէր վտանգը՝ վտանգին
համար, կը տենչար փառաց հասնիլ ո՞ւր և է
կերպիւ, հետեւանքը փոյթը չէր: Թաթար
ասպետի տիպարը իր վրայ կը մարմնաւորէր,
անոր համար ժողովրդական երգերը զինքը
կը հռչակէին, և իրեն անունը նշանաւոր ե-
ղած էր բոլոր Ռդրանիոյ մէջ:


Վերջերս՝ թէպէտեւ Դեր-գնդապետ էր, այլ

կը հրամայէր իրրեւ Դնդապետ. վասն զի ծեր
Լոպոտան հրամանի գաւազանը կրելու ան-
կարող էր:

Սքշիւլցքի Պոկունի ո՞վ բլլալը աղէկ գի-
տէր. իշխանուհւոյն կը հարցնէր՝ պարզ ցուց-
նելու համար թէ կ'արհամարհէ զանկաւ:
Հակառակ անոր մեծ համբաւին, տեղակա-
լին արիւնը երակներուն մէջ կ'եռար՝ մտա-
ծելով միայն որ այն Ղաղախը իրեն հետ
այնչափ լրբաբար վարուեցաւ: Հասկցաւ
միանշամայն որ իրենց հակառակութիւնը
այսպէս թեթեւ կերպով վերջ չէր կրնար ու-
նենայ: Սքշիւլցքի վտանգ էր բոլորովին
իրեն անձին վրայ, պիտի էր երկաթի նման,
արհամարհող ամէն վտանգի: Եթէ երիտա-
սարդ իշխանուհւոյն մօտ չըլլար, նոյն վայր-
կենին պիտի յարձըրէր ձիով Պոկունին վը-
րայ:

Կարաւանն անցնէր էր անդունդը, հեռուէն
Ռազլիկի պատուհաններուն լոյսերը կը փայլ-
փլէին:

Թրգմ. Հ. Ա. ԳՈՆՏԱՔԱՆԱՆ



ԳԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Ամէն անգամ որ վարդ բառը լսած եմ՝
նկարուեր է մտքիս մէջ միանգամայն նաեւ
կարմիր գոյնը. և սակայն կայ դեղին վարդ,
կայ սպիտակ վարդ. և արուեստն զմեզ
կ'ապահովցնէ որ ամէն գոյնով կրնանք
ունենալ այս ծաղիկը: Հասարակաց միտքն
այս տեսակ սեւեռուցն ունի նաեւ բանա-
ստեղծութիւն բառին վրայ: Ինչ է բա-
նաստեղծութիւն. վարդի, շուշանի, մեխա-
կի, յասմիկի, — ծաղիկներու փունջ մը՝
զոր հանդիսի մ'առթիւ իրարու ընծայ կու
տանք: Կը տեսնէք՝ բոլոր ասանք ծիծաղի,
վայելի, երջանկութեան, զուարճութեան
մէջմէկ խորհրդանշաններ են: Իսկ որով
հետեւ հիմայ կը մտածուի թէ բանաստեղ-
ծութիւնը կեանքն է, — կեանքն զմեզ փորձ-